

ԲԱԺԱՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ

Պուշկարիոյ հաւար	12 ժր.
Տարեկան	6 »
Վեցամսեայ	15 »
Արտասահմանի հաւար	8 »

Աւերիկայի հաւար	3 ժր.
Տարեկան	1.50 »
Վեցամսեայ	»

Իսկուհական տղոց արտադրութիւնը հաւար 40 սահմանը կրէր իրեն հաւար 20 սահմանը կրէր իրեն հաւար 20 0/0 զեղջ կրէր

Կառնայի հաւար մի րե 10 սահմանը

ՇՆԱՐԻ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ԲԱՂՄԱՎԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀԻՏԻՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԵՒ ԴԱՐՄԱՆ ՕՐԵՐԸ

Նախկին և նոր գրիկի հարստութեան հասցե

R. P. Kalémcarian, Mechitaristengassu
W. 4.
(Autriche)

я на вѣстникѣ
«Шаржумъ»
Варна

Redaction du journal
«Charjoun»
Varna (Bulgarie)

Արտասահմանի հաւար
մեկի (20 ՍԱՆԹԻՄ)
Պուշկարիոյ հաւար
մեկի > 15 ՍԱՆԹԻՄ

Գրութիւնք ևս չեն տրուիր

ԱԶԳ

Մեր բոլոր այն բաժանորդները, որոնք զիս չեն վճարած իրենց բաժանորդները, թող հաճին անյապաղ մեզ հասցնել զանոնք, կը յիշեցնենք իրենց թէ մեր բոլոր ծախքերը կանխիկ ըլլալով չենք կրնար թերթը ապառիկ ծախել:

Սիրազը:

ԴԱՐՁԵԱԼ ԶԵՅԹՈՒՆԻ ՀԱՍԱՐ

Արդէն ամիս մը կայ որ, այս սինակներուն մէջ արձագանգ տուա տառապանքի և կարօտութեան այն ցաւագին ազգակը, որ այս միջոցիս կը հնչէ Ձէյթունի խորատ լեռներուն մէջ՝ պատերազմի երգերէն, հրազենի պայթումներէն ետքը:

Լուրեր կան, որոնք ելեքտրական հասանքներու պէս ցնցելու են ամբողջ մոլորակը մը:

Լուրեր կան, որոնք յանկարծական փոփոխութիւններու նման յուզելու, ալեկոծելու են ամբողջ ազգ մը:

Լուրեր կան, այո՛, որոնք խորտակելու, փշրելու են դռները ամենէն ամուր փակուած սրտերուն անգամ՝ զգացումի հեղեղներ յորդեցնելու համար անկից:

Վեհապանծ Ձէյթունի կարօտ... Ահաւասիկ մէկը այդ լուրերէն:

Արտասահմանի հայ մամուլն արդէն գրեց անոր մասին, բայց գեռ հայ ազգը չյուզուիք, չցրիցուիք, չալեկոծուիք, եղբայրական բերանոր ձեռքեր չեն երկնարդ դէպ Ձէյթուն:

Հայ ազգը մոռցա՛ւ միթէ 1895 ի, 96 ի փառաւոր թուականները, հայ—յեղափոխական պատմութեան այդ ոսկետառ էջերը:

Հայ ազգը մոռցա՛ւ որ հանուր ազգին դատը պաշտպանեցին անոնք, կարիճ զէյթունցիները, այնքան գիւցազիօրէն մղելով իրենց յաղթական մեծ պայքարը:

ահեղ բանակի մը դէմ՝ դիմ ետ թը տարի առաջ՝ մեծով պղտիկով:

Հայ ազգը մոռցա՛ւ ասոնք:

— ո՛չ:

Թուականներ կան, որոնք չեն մոռցուիր, որոնք անշնչելիօրէն կարճանագրուին ազգերու յիշողութեան մէջ, վասն զի ազգի մը կեանքին հիմերն են անոնք:

Պ. Ձէյթունցիին՝ իր «Ձէյթունի անցեալէն և ներկայէն» գրքին՝ նոր հրատարակուած Բ. մասին մէջ այսպէս կը բացատրուի զՁէյթուն ոչ թէ միայն բժշկի կը կարօտի, այլ նաեւ ահագին հիւանդանոցի մը: Ձէյթուն իւր գիւղօրայքով հանդերձ կը պարունակէ իւր մէջ 2370 տուն զուտ հայ. ինչո՞ւ չունենայ մի հիւանդանոց: ո՛րչափ կտրիճներ հասակին չառած կը յանձնուին սե հողին՝ հիւանդանոցի չգոյութեան պատճառով:

Բն մտածել որ հիմայ Ձէյթունի մէջ համաճարակ մըն ալ կայ:

Ի՞նչ ամիս մը առաջ «հարձու» այս լուրը հազորգած ատեն՝ դիմում բրաւ վառնայի Պատ. Բազական Խորհրդին, որ նախաձեռնարկը ըլլայ ի նպատակ Ձէյթունի հանգստակութեան մը՝ Պուլկարիոյ մէջ: Բայց Պատ. Խորհրդան խորհրդը լուռ մնաց մինչեւ հիմայ:

Մենք կը շարունակենք սակայն հաւատալ որ Պուլկարիոյ հայութիւնը պիտի կատարէ իր պարտականութիւնը՝ հանդէպ ազգային փրկութեան ամենէն անվեհեր սխոյեաններուն:

Վկայ՝ մեր ըսածին Պ. Միխիլ—Որգեգիրը, որ Տօպրուճայի մէկ անկիւնէն այնքան ազնուաբար կառկաւեց իր նպատու Ձէյթունին:

Պ. Միխիլ—Որգեգիրին հետ մենք ալ կը հաւատանք որ Պուլկարիոյ—ինչպէս նաեւ Ռուսմանիոյ—հայ գաղութին մէջ քիչերպիտի չուզեն օգնել հիւանդ Ձէյթուն:

ցիներուն:

Եւ այս հաւատքով է որ այս անգամ ալ կը դիմենք Պուլկարիոյ և Ռուսմանիոյ հայ երիտասարդութեան: Թող բոլոր հայարնակ քաղաքներու մէջ յանձնաժողովներ կազմուին և հանգանակութիւններ կատարուին:

Մենք յանձնառու կըլլանք «Նարժում»-ի մէջ հրատարակել յաջորդաբար նուիրատուներուն ցուցակները և ի հարկին մեզ խըրկուած զուճարները հասցնել Ձէյթուն՝ ո՛րչափ ապահով միջոցով մը կը հաւատանք որ Պուլկարիոյ և Ռուսմանիոյ հայ երիտասարդներէն շատեր պիտի զգան պետքին մեծութիւնը: Թող անոնք այս առթիւ ալ կատարեն իրենց սրբազնագոյն պարտականութիւններէն մէկը:

Վհսա

ԻՆՉ ԵՆ ԸՐԱԾ ԵՒ ԻՆՉՈՎ ԵՆ ԱՐԺԱՆԻ

Ս. ԻՐ ԳՈՐԾԻՆ ԷՐ

Մատուր և ֆիզիքական աշխատութիւն, բարոյական և նիւթական աջակցութիւն, հայրենասիրական և ազատագրական նուիրական զգացումներ, ինչ որ նուրբ, սուրբ, զուլալ ու մաքուր է մի փնտռէք ասոնց մէջ: Տնաւեր ստույթիւնը, ծակաչք ազահութիւնը, թրքական ծուլութիւնը՝ Ասդոմագոմորական պիղծ անբարոյականութիւնը մարմնացնող արցունքներ են ասոնք, որոնց ոտքի պատուանդանին վրայ ճիւղութիւններու նուիրական մէկ խօսքը խորունկ կերպով քանպակուած է:

Անհն բան ներքի է միայն մեզ ինչպէս ներքի չէ:

Մասամբ թերեւս ներքի ըլլայ մի անհատի չի հետաքրքրուիլ չի զբաղուիլ ազգային գործե-

րով կամ հասարակական խնդիրներով, բայց մի եկեղեցական պաշտօնեայի, սրուն յանձնուած է ամբողջ եւրոպայի հայ գաղթականութեան բարոյական եւ ազգային ճակատագիրը, ներքի՞ է արդեօք, որ «պախտական անտարբերութեամբ նայի իրեն յանձնուած թեմերու ազգային և եկեղեցական գործերու վրայ. ներքի՞ է արդեօք, սր թոյլ տայ, որ պէտքի իր առջեւը շահագործումներ կատարուին, խաչագողութիւններ ըլլան և ճիւղութեան ծրագրեր սարգուին:

Մարտիլիայի մէջ՝ տունը փակուած, սէտիրին վրայ փռուած եպիսկոպոս մը ունինք, Գէորգ Իւթիւճեան անունով. այս մարդը կը ներկայացնէ ամենայն հայոց Հայրապետութիւնը. ընդհ. Եւրոպայի հայոց առաջնորդի պսպղուն և ուռուցիկ տիտղոսը կախած է վիպէն. բոլորովին անշնորհք կերպով:

Փարիզի անուանական կերպով գոյութիւն ունեցող եկեղեցի մը և հոգաբարձութիւն մը ունինք. Ֆրանսական կառավարութեան ներկայացնել և իբր հայկական ինքնուրոյն մարմին մը ճանչցնել տար:

Իւրիսմանի գործն էր Հայոց Վեհ. Հայրապետի ներկայացուցիչը կամ Եւրոպայի հայոց առաջնորդութիւնը եւ վերջապէս ներկայի մէջ ինքզինքը եւրոպական ազգերու զանազան դաւանութեանց պետերուն կամ անոնց փայլուն ներկայացուցիչներու ծանօթացնելը:

Իւրիսմանի գործն էր:

Ամերիկայի հայրենասէր երիտասարդ վարդապետներուն պէս ազգային հանդէսներու նախագահելը, հայասէր Եւրոպացիներու շնորհակալութիւն մատուցանելը, ազգին բարդուած մեղադրանքներու հերքումը:

Իւրիսմանի գործն էր:

Փռանսահայ գաղթականութեան՝ գոնէ բարոյական պետքերուն, իբրեւ իր հօտին քաջ հո-

վրէ՛ ծառայելը
Իր անհանձնելի գործն էր .

Փարիզի բարեգործական ընկերութիւնը իր մթնոլորտում և ճաթած վիճակէն հանելու պարագանքն է պոպուլար հաստատութիւն մի դարձնելը . ինչպէս հոգաբարձուական ընտրութեան ժամանակ բուժարկութիւնը ազգային սահմանագրական օրէնքներու համաձայն կատարել տալը .

Իր անհանձնելի գործն էր .

Տարիներէ ի վեր պատուելի թումանի անտարանական սեւ մոլեւան գութեամբ, արիւնի մէջէն հանուած հայ որբերուն իբրեւ «նախնական» կամ կոպուլտներու . Պապենի աղօթքը կը մոռցնէ, Լուտերականութեան կը վարժեցնէ, Լոնտոնի փոլոցներուն մէջ իբր «բարակէօզ» կը խաղցնէ, մեր ազգային արժանապատուութիւնը կը սեւցնէ, որբերու անունով և կաշիով հարստեր անգլիացի բարեգործները կը կոչուպէս, առանց որբի որբանոցի մը գոյութիւնը կը հռչակէ ամեն տեղ . Թումանեանի զաւրագործութեանց, խաբէութեանց լիբր շահագործութեանց երեւան հանելը և հրապարակելը

Իր անհանձնելի գործն էր .

Իր խոշոր քիմիկ առջեւ Փարիզի մէջ, ուրիշ խաչագող մը կը տնկուի, կնիկ մըն է այս անգամ, իր ճաշկով քիչ շատ աղւոր կնիկ մը .

«Հայկական որբանոցներու գործը» փայլուն անունին տակ կը ընկնէ շահագործական տան մը հիմը քննել, Բումանիայէ՞ որբերութիւն կուտայ (տես «ճարտարագիտական» 487, 493 և 498 թիւերը) . անհասանելի կը հետաքրքրուին որբերու ներկայումս ու ապագայովը և կը յաշտուին փակել Քոլլոնայի գործը, ուրկէ պիտի ելլին ապահովաբար ապագայ հայ ճիւղութեան անաշխ առարեւները .

Քոլլոնայի ճիւղութեան դաւին գաղտնիքը բանալ, հոն բանտարկուած տղայոց և աղջիկներու տիրութիւն ընել, իրենց երկրորդը վերագործել, Քոլլոնայն և իր հայ արբանեակները գիմակազուրկ ընել, զանոնք հաստատութեան առջեւ խայտառակ շահամուլ շարագործներ հռչակելը .

Իր անհանձնելի գործն էր .

Ըստնք թէ իր հայրութեան սահմաններէն դուրս, Բումանիայ, Կովկասի, Բումանիոյ և Աւստրիոյ ետ ինկած վայրերը և փուլ տեղերը խաչագողութեամբ սուպատակող ֆառոր թալթուր նոսրիկին քահանայ (Գրեմբլարցի Թադէոս Փափագեան) իր սահմաններէն

(*) Նոր իմացանք որ, Ե. Ս. Օժոնթիւն Ս. Հայրապետը Գրեմբլարցի Տ. Թադէոս քահանայ Փափագեանը կարգալոյժ հռչակած է . իր կատա-

ղուրս պատժելը իր գործը չէր . բայց այդ սեւ մարդը, երբ «կըսու» իր թէմին մէջ ալ իր աչքին առջեւ իբր հայ քահանայ իրութեամբ ստալոգ պատմութիւններով մուրալ հայերէ, Ֆրանսասացիներէ, անգլիացիներէ, բողոքական պատուելիներէ, կաթոլիկ վարդապետներէ, Ֆրանսաբարեգործական ընկերութեան, քաղաքագետութիւններէ, երբայեցոց բարբուճակներէ, Բուշիլտէն, թուրքաց հիպոտոսարանէն և գեոպոնտոնէն, վերջապէս ինչ որ ամենէն ահաբեկին և խայտառակն է մեղ համար, Ֆրանսայի նախագահ Պ. Լուպէէն՝ զանի արգիլելը, պատժելը

Իր անհանձնելի գործն էր .

Գրեմբլարցի Թադէոս Փափագեանի և իր անտակ զաւկի, ազգափառ ընթացքը և Քոլլոնայի հետ ունեցած շահամուլ գործակցութիւնը առաջին անգամ հրապարակել, հրատարակել և յայտարարելը

Իր անհանձնելի գործն էր .

Ասկէ քանի մը տարի առաջ Գրեմբլարցի Թադէոսը, իբր հայ քահանայ վիճակային մէջ, ճամբորդներ կը կոչուպէս խաբէութիւն մատուցող պիտի չլինէ, այդ նպատակով հանգանակած զրամներով իր աղուն աշխարհի շուրջը ընել կուտար և վերջն ալ Փարիզի մէջ գործարան մը կը բանար, միտմանակ մուրացկանութիւնը չի թողնուլ ձեռքէ .

Այս գաղտնիքները և մտքեւանութիւնները հասարակութեան պարզել, ժողովուրդը մարգանման հրէջէն զգուշացնել և իր տէր եղբայր հայրապետի արտասահմանը ներկայացնելը՝ աշխարհականէ մը ալ աւելի

Իր անհանձնելի գործն էր .

Կը թողունք եզրիպատահայ թերթերու, իւթիւնեանի գործունեութեան և անրասիբ բարոյականութեան հաշիւը տալ . մեր հաւաքած սեղեկութիւնները՝ իւթիւնեանի Եզրիպատահայ Գրեմբլարցի թերթերու թուականին վրայ շատ ալ նպաստուոր և... չեն .

Երկրորդ յօդուածով մը պիտի բացատրենք թէ ինչ ըրած է իւթիւնեան եպիսկոպոս Եւրոպայի Հայոց ընդհանուր առաջնորդութեան շրջանին մէջ .

Ձոյգ մը կոշիկ չէ մաշեցուցած ազգային գործերու համար և ոչ ալ զոյգ մը հողաթափ նոյն իսկ պաշտած աստուծու պաշտամունքին .

3 Ապրիլ 1903

Կուլուչ

Կրօնական ժողովը . որուն հաղորդում է հայրապետական կոնգրակի պատճէնը գոյութեամբ տեղեկացած է .

ԴԱՐՁՅԱԼ ՇՈՒՐՁՆԵՐՍ

ՊԱՏԱՍԽԱՆ Պ. Ս. ՍԱԳՈՒՆՈՒՆ

(Շար. նախորդ փոխն և վերջ)

Ահա մի գոհար էլ պ. Սագունու պատասխանից .

«Յօդուածի այն կէտերին՝ ուր պարունը կամ մտացածին գոշակութիւններ է անուծ, կամ բացարձակ ստուծ . ինչպէս՝ «յեղագիտական ունէ գործ հայրենիքում» հնչակեաների մտքով սկի չի անցնում — սեւեւում է՞ք ինչ փլվածքով, քոլոր հնչակեաների մտքով ինչպէս՝ «հիտու թեմա» կապուցել է՞ք . — կամ թէ՛ հնչակ գուտներին խորտակել կոնկրետ օսկուն է դարձել ու ևն . չարժէ իսկ ուշադրութիւն դարձնել, քանի որ ինքն էլ համարում է որ ստուծ է .»

Վերջացաւ . «չարժէ ուշադրութիւն դարձնել, քանի որ ստուծ է .» Ահա ասիկ պ. Սագունու պատասխանը, նրա տրամաբանութիւնը : Դէ՛հ, արբանք միթէ՞ իր կապէս «բարբաճանք» չէր, աւելի օսկուն չէր, ինչ պէ՞ք է սեւեւ . երբ դո՞ք էք խօսում :

Նկատելով որ ոչ կեդրոն խրկած դրամներն և ոչ ալ ամերիկայի մէջ մնացածներէն — սեւեւ մը անգամ չէ յատկացած բուն երկրի յիշատակական գործունեութեան, այլ բոլորը արտասահմանի մէջ վատնել է անհաշիւ և առանց քանտորի .

Նկատելով որ միացուլ կուտակցութեան կեդրոնը դեռ յուլիսին (1902) կուտակ և սարածանութեան բուն դարձած էր, շնայելով որ Միութեան ձուլումը յուլիս 28ին (1902) եղած է .

Ահա ասիկ ինչպէս են խօսում իրողութիւնները . պ. Սագունու, որոնցից եւ մերցնում փաստերը . Այդ տողերն էլ ձեր պաշտօնական յայտարարութիւններն են, Պոսթըն, փետ. 8, 1903 : Առաջին ցիսուսը որ լուսաւորում է «յեղագիտական» ունէ գործ հայրենիքում, հնչակեաների մտքով սկի չէ անցնում հարցը . կարօտ չէ ունէ բացատրութեան իմ կողմից : Ձեր խօսքերը ձեզ հնք ցոյց տալիս : Իսկ նոյն ինչ վերաբերում է երկրորդին, ասում եմ, որ դո՞ք այդ «կրօնի և տարածանութեան» միջոցին որ սկսում էր յուլիսից, մինչեւ դեկտեմբեր թմփկով էիք ստուծ ժողովրդի առաջ միութեան և մերիկայում միութեան անունով հանգուակութիւնները շարունակում էին և այդ «ոճրագործութիւնները» ու ստակալի դաւարութիւնները՝ յայտարարեցիք միայն յունվար ամսուան 1903, Մեգիցի հէնց առաջարկութիւնը, որին դիմում էք, պ. Սագունու, պահանջում էք այդպէս անկողմակալ վիճակ ֆաստերը այնչափ պարզ են խօսում, որ աւելորդ կը լինէին ամեն տեսակ մտացածին գուշակութիւնները և այլն .

Սե ինքրում ենք, անաչառ հայեացք ձեռքէք հայրենիքից եկած տեղեկութիւններին, նամակներին . այնտեղ տիրող գաժան և անտանելի յարկերին ու սիւնոյն ժամանակ, միակնարկ էլ ձեր գործունեութեան : Ամբողջ անկախ յայտարարութեամբ է արեան փոթորկում, հայ տարրը այն տեղ միահամուռ զանգածով ձնչվում է կատաղի ընթիւն, բնաջնջման սարսափի և մասնակի, բայց անաղբուր սպանութիւններին և վայրագութիւնների տակ : Էլ չի մնաց մի բանասոյին

խոսող, մի արտարազայր, որ ցողված չի լինի անձնուրաց յեղափոխական արիւնով, մի մասը կախաղան, որ ծանրաբեռնված չի լինի նրա վրէժի վերջին կտակով : Հազարներ էլ ցրված տաճկաստանի ամեն ծայրերուն, կուտած գործի հանրութեան տակ, բայց ազատութեան վեհ գաղափարով հպարտ ճակատով՝ պատրաստ են ամեն բոպէ իրանց նախորդների պէս նահատակութեան : Դիտեցէք անհաշիւ հայեացքով զիտեցէք կացութիւնը, գործի պահանջը մայր երկրում և դրանով մեկակալ սչքի անցկացրէք և հնչակեան իրականութիւնը, Անաչառ ու անկողմակալ ոգով քննեցէք ձեր վերջի եօթ երկար ասարիներին գործունեութեան՝ եթէ կարելի է ասի՝ արտարազայր կաթոլիկներ, Վերջապէս աչք անեցէք միութեան և բաժանման մտայն շրջանի վրայ, կարգացէք ձեր հանրաձանթ պաշտօնական յայտարարութիւնը և ներքին անցքերը ու տեսէք թէ ինչքան զաւրալի ողբերգութիւն են կազմում դրանք .

«Վերհերձուածը ձեր ամեն քայլափոխում, ամեն ժողովում, ամեն խորհրդակցութեան մէջ, ամեն ձեռնարկին հետեւում է խաբէրայական և դաւաճանական, անօրինակ դաւերով, իսկ դո՞ք քայլում էք՝ հայալուծ երեւոյթական անմեղ անգիտակցութեամբ և միամտութեամբ գոնէ դո՞ք այդպէս էք աշխատում ցոյց տալ գործը ժողովրդին : Սակայն այդ գործողութիւններից և ոչ մէկը դրական, բնական հողի վրայ է հիմնված, իրականութեան հասանալի, Այդպէս երկրից երկիր միատարրում են, որպէսզի առասպելական յիմարութիւններ զգեսիլ, տղի անցքեր, ոճրագործութիւններ դուրս տան : Այդպէս է բոլորով միմիայն կենտրոնի գործունեութեան» . փոթորկալի շրջանը . . . Դրանից յետոյ սկսվում է «ճարագործումը», բայց ինչ մագրագործում և Դա էլ հրէջալին գործողութիւններ մի ամբողջ հաւաքածոյ է : Ամեն անաչառ և անկողմակալ գաղափարութեամբ հայ արագահասանքով միայն կարող է վերաբերվել այդ պատմութեանը :

Յետոյ, Բաժանումից մինչեւ այժմ ինչ գործերով են զբաղում որդի հնչակեան շրջանակները, ձեռնում է՞ք Ամերիկայում և Բոլզարիայում նրանք զբաղված են լոկ պատակախնդրի, զեղծուիների հարցերով և ասիկոսկներով : Նրանք այժմ իսկապէս հնչակեան մեւ ճանաչելի կայող են լինել, բայց երբէք յեղափոխական չեն կոչվի, Այդպէս էլ կը մնան, քանի կը շարունակուի այդ ընթացքը : Այ որպիսի գրութիւն ստեղծեց հնչակեան միութիւնը, ինչքան օգտակար հանդիսացաւ նա մեր ազատագրական դատին, դա իրականութեան է, դասն, ցաւալի իրողութիւնը, որին տեսնելու համար սակայն՝ անաչառ լինել պէ՞ք է, պ. Սագունու : Սրան հանգէպ ինչ էինք խօսել մենք . — յատ ջնջին բան :

Եւ ևս չեմ զարմանում, բայց պ. Սագունուն օտարաբէ թվում այն հանգամանքը, թէ հնչակեան պատակաւոր ամեն հայի սրտին կարող է ցաւ պատճառել, նախ այդ ցաւը կարող լիտի սարցուել է անաւանում կարող է, որովհետեւ ես սարքում եմ «եւրոպայի մի անկողմ» իմ անձնական միջնոցերով և ազատ եմ կողմակալութեան ամեն կողմակալողութեանը, իսկ պ. Սագունուին ապ-

բում է... Լօնտօնում (որպէս թէ Լօն- տօնը Ասիայում լինէր)...

Ահա ինչքան է բարձրացել, ուր է հասնել չարքը...

Էմիլ Շդարշեանց

Ն Ա Ր Ի Բ

ՊՈՒԿԱՐ ԸՆԹԵՐՈՂՈՒՆ ԱՌՁԵՒ



Վերջերս լոյս տեսած «Ղարիբի» թարգմանութեան երկրորդ յատկա- բանը...

Ասին էրօխա, ամեն դասակարգ, ամեն ազգ՝ իր պատական ու կուր- սուրական զարգացման ամէն շրջանի մէջ...

Իրերու այս անողջ տրամաբանու- թեան անլիծակի կըլլայ այս միտքը թէ մեծ արուեստագէտ-բանաստեղծ- ները կը պատկանին վերածնունդ, վա- յելող հասարակական դասակարգի:

Լաւարթին ու Հիւզօն՝ բովանդակի այս սկայական ներկայացուցները բանաստեղծ գաւակները չէին ֆրան- սական մեծ յեղափոխութեան, որ հիւզօն արտեղ Յրօնայի քաղաքա- կան զրուէիւնը ու նոր պայմաններ հայտնաբերեց բարձր գրականութեան մը:

Նոյնը կը տեսնենք այսօր Հայաս- տանի մէջ ալ, Հայ ազգին՝ գոյու- թեան կոտորածի միջոցով շրջանը ծաղկումով, վերածնունդով շրջանը: Իր արկածով ու արկածով շրջանը: Հայաստանի հիմա ապրած պատմա- կան րոպէն վառ, ձգտող ու հրադ- իտային է: Հայաստանի, կամ աւելի ճիշդը, հասարակայնի վերածնունդ, վերելող դասակարգին տնտեսական ու կուլտուրական զարգացման առջեւ շինական բարձր ու մտայն պատերու պէս կանգնած է սուրբանի ինքնա կալուածիւնը, տնտեսական անողջ բնութիւնը իր միջնադարեան, ա- լատական հասարակական դրութիւն- ներով, Պէտք է կործանել այս սեւ պատը: Ու ահա այս փոթորկալի է- բոխան կը ծնի փոթորկալի զաւակ- ներ, որոնցմէ մէկ քանինքը զաւել- տական ձեւով կը նկարեն տաճակայն ու ասիական հին կարգերու, ըմբռ- նուններու ու գաղափարներու անաղ- բօնիզմը, կամ թէ անողջ կերպով կը հարուածին զանոնք եւ մի եւնոյն աստիճանի կերպով կերպին ա- պագայն ուսմակարգական նոր Հայաս- տանը, անոր արհեստանոցները, վար- ժարանները ու համալսարանները:

Նոնցմէ մին է նաեւ Ղարիբ: «Ղարիբ մեր ազգին բանաստեղծա- կան-յեղափոխական վարդն է, որուն անուշահոտութիւնը կը թափանցի խոնաւ խրճիթներու ու կիսախար- խուլ տնակներու էն թագուն անկ- իւնները: Ղարիբ՝ պատանի ու տա- զանդաւոր, համակրելի ու մղիչ, ե- սանդոս ու հզօր հայ բանաստեղծի մը ծածկանունն է: Անիկա հայկա- կան ազատութեան ու անկախու- թեան յանդուգն ու հրաբորոք եր- գիչն է: Ղարիբ՝ մեր յեղափոխական մաքառումներու ասպարիզին վրայ բանաստեղծական արողեանն է: Ա- նոր ոճը վերին աստիճանի ողբա- ցած է, որ զգացումներուն զօրու- թեան ու խորութեան աստիճանը կը յայտնէ: պատկերները, որոնցմով կը մամնացնէ որոշ գաղափարներ, ըմ- բռնումներ ու հայեացքներ, կենդա- նի, թանձրացեալ ու փայլուն են, որն ալ կը յայտնէ անոր բանաստեղ- ծական կորովը ու երեւակայութեան բարձր թիւղքը՝ փայլուն ու սրըն- թաց, որ իր ոգեւորիչ անունը՝ խեղճ հարստահարուած ժողովուրդին տա- նապանքներուն ու հրճուանքներու տիրութիւններն մէջէն կը քաղէ: Ինչ- պէս պիտի ընէր Պէլինսքի:

Որոշ գաղափար մը տալ կարենա- լու համար այս հայ գրողներին բա- նաստեղծական տաղանդին վրայ, կը յանդգնիք զուգակշիռ մը գնել անոր ու Պօթէֆին միջեւ, Ղարիբ՝ ոճի ու պատճառաբանութեան կող- մանէ: Ոգիի ու բնա-որութեան, արտայայտման ուժի ու երեւակայու- թեան սրբութեան կողմանէ, նիւթին յուզիչութեան ու ասոյզու- թեան, գաղափարներու, նորութեան ու կատարելագործման կողմանէ, շարժառիթներու, քաղաքացիութեան ու ժամանակակցութեան, զգացում- ներու վեհութեան ու թարմութեան կողմանէ: Պօթէֆին հետ բանաստեղ- ծական միեւնոյն, այսպէս ըսենք, պատուանդանի վրայ կը կենայ: Թե- րեւս աւելին, Ղարիբ՝ Պօթէֆին ա- լելի կատարելագործումն ու ըրողա- կուած ըմբռնումներ ունի: Ասիկա գիւրի կը մեկնուի, առաջինը կապ- ի աւելի բանաձեւուած էրօխայի մը մէջ, հասարակական աւելի զանա- զանուած յարաբերութիւններու մէջ: քան երկրորդը:

Ղարիբ՝ հայ ազգին հասունցած պահանջներէն ու զարկուած է անոնց համար պայքարելու:


Հայ գրականութեան մէջ Ղարիբ ծանօթ է իր պատկերներով, որոնք առաջին անգամ լոյս տեսան արտա- սանձանի յեղափոխական ամսագրերը «Պրոչակ» մէջ, ու հիմա արտասպ- ուած ու հրատարակուած են երեք գատ գրքիկներու մէջ Ազատութեան ճանապարհին» վերնագրով: Այս ապտկերները կը հմայեն ընթեր- ցողը իրենց ճշգրիտ, բանաստեղծա- կան ու տիպար վերարտադրումովը հայկական այն իրականութիւնը, որ վերջին տասնամեակներս բաւական կիճճառեցաւ ու այլակերպուեցաւ: Ղարիբին «պատկերները» իրական, անմիջական, օպէթիթի պատկերներ են հայ ազգին՝ իր հարստահարիչնե- րուն ու դարձեալ բանաստեղծներուն զէմ մղած կուրիւն: Անոնց մէջ ար- ուեստագիտական հիմնային ձեռնհա- տութեամբ ձուլուած են գերի հային զանաւորները, անարժանքանք հառաջը, անգոր բարկութիւնը, անյազ վրէժի զայրոյթը, սեւ մոռա- ցութեան ամօթը, թագուն ձգտում-

ները, սկեայ երազները, փայլուն յոյսերը, պայծառ իղձերը:

«Պատկերները» ժողովրդի հոգիին տիպար ցուցումներն են:

Մտորգմանց
Գառնիկ Գեորգեան
(Շարունակելի)

ՁԵՅԹՈՒՆԵՆ



Մեր ընթերցողներուն ուշագ- րութիւնը կը հրաւիրենք հետե- ւալ տողերուն վրայ, որոնք քայ- ուած են Ձէյթունէն Պոլսոյ Փօւնջ լրագրին գրուած նամակէ մը:

«Թէեւ յօտուածագիրը չէր ուլած մանրամասնաբար նկարագրել վերո- յիշեալ պիտի (ժողովատի) տեղոյ մէջ գործածները, այլ ինչ հարկ մանրա- մասնութեանց մէջ մտնելու, քանի որ զոհերու ստուար թիւէն իսկ կրնայ հետեւցողի աւելին: Յաւանքն այն է որ սոյն պիտի ապաշին երեւմտե- առիւ չէ որ, կը ցաւիթ, դժբախտ տարար քանի՛ ջանի՛ անգամներ ե- րեցած և հազարաւոր անմեղ ման- կիկներու կորստան ականատես լինե- լէ յստ՝ եօթամեայ մի զագարով թո- ղած է զմեզ, ուրիշ տեղուանք եւս թափառելու և իւր անգթութիւններն ի գործ դնելու: Եւ միթէ ա՞ս է մի- այն պատճառը՝ մեր հագեճատներուն տարածում մահուամբ ի հող սապանի լինելուն: յայտ է թէ՛ ո՛չ: Ուրեմն ձգենք զայս, եւ կուգեմ օ՛ր աւելին ցոյց տալ, հանապազօրեայն մասնա- նիշիւ և դարման խնդրել, զայրման մը, որ անհրաժեշտ է և թիւրաւորներու կեանքը պիտի փրկէ, քանի որ գիւ- ղաքաղաքիս մէջ օրբստօրէական նո- րանոր հիւանդութիւններ անպակաս են, թէ ամառ և թէ՛ ձմեռ...»

Ու նամակագիրը խօսելով այն մասին թէ իրենք շատ աղքատ վիճակի մը մէջ ըլլալով չեն կըր- նար պահել իրենց վարժարաննե- րը կը գիմէ Պատրիարքարանի աջակցութեան և կաւելցնէ: ...

Այժմէն կը համարձակիմ ըսել որ՝ եթէ տեղոյ վարժարանները զրկուին նպաստէ, վարժարան երբեք պիտի չկարեմք ունենալ, մեր տղաքներ բոլորովին ազէտ պիտի մնան:

Մեր եկեղեցիներ խեղճութեան պի- տի մասնուին, վասնզի մի քանի տարիներէ իվեր, բաւական երկեցիկ մանուկներ կուսնանք բարեբախ- տաբար, այս՝ միմիայն վարժարան- ներու շնորհիւ, և այժմ օրքան որ կզգամք մեր կորուստները բժշկի մը չզոյրութենէն բնականաբար նոյնը եւս աւելին պիտի զգամք վարժարան- ներու մասին...»

ՇՆՈՆԱԿԱԼԻՔ

Ազգային երկսեռ վարժարաններուն ի նպատակ սարքուած գրական և երաժշտական երեկոյթին առթիւ, որ այնքան գոհացուցիչ արդիւք մը ունեցաւ, Հոգաբարձութիւնս պարտք կը սեպէ իւր խորին շնորհակալութիւնը յայտնել Ազնուուհի Օրբ. Տ. և Մ. Տավուսեանի, Ա. Աբելեանի, Զ. Նորիկեանի, Ս. Մեղքոնեանի, Խ. Չօլաքեանի, Տ. Սարգիսեանի, ինչպէս նաեւ Պ. Նաթան Պէկ Ամիրխանեանի և «Գողթան» երգեցիկ խումբի բոլոր պատուարժան անդամներուն, որոնք իրենց թանկագին ու անձնուէր աջակցութեամբ մեծ փայլ և շուք տուին սոյն երեկոյթին և գերազանցապէս սատարեցին անոր յաջողութեան:

Ի դիմաց Ազգ. երկսեռ վարժարաններու Հոգաբարձութեան Ատենադպիր Ատենապետ Գ. Աւագեան Յ.Մ. Թոյլմուսեան (Կնիք)

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Վերջերս Ուսումնական խորհուրդի կողմէն Պօլսոյ և գաւառներու ազգային վարժարաններու համար հրատարակուած երկու վիճակացոյցները յանձնուած են քաղաքական ժողովի նկատողութեանը:

Պուլկար թերթերէ կը տեղեկանանք թէ Սիլիստրէի հայոց եկեղեցին գողեր մտնելով գողցած են եկեղեցական թանկագին առարկաներ:

Քաղէջի կուսակալութեան մէջ՝ Վանայ ծովուն հիւսիսակող մը գտնուող Մալազկերտ անուն քաղաքին մէջ երկրաշարժ տեղի ունենալով բաւական վնասներ պատճառուած է: Սուլթանը իմանալով ատիկայ բարեհաճեր է 20000 զրշ. խրկել արկածեալներուն համար: Երկրաշարժէ վնասուած է եղեր նոյնպէս Ատիլիսի վաղ գիւղաքաղաքը՝ Մալազկերտի հարաւակողմը փոքր նաւահանգիստը մը:

Պօլիս՝ Էլմատաղի բնակող կառապան Արամ փորձեր է անձնասպան ըլլալ՝ դաշոյն մը միտելով իր փորը՝ որովհետեւ իր քոյրը իր խրատներուն հակառակ կը շարունակէ եղեր Ղալաթիա երգեցիկ — սրճարանի մը մէջ սպասուորել:

Հանգուցեալ Պօղոս ազա Շիշմանեանի ամուսինը և Քէրէստէճեան Սիմոն աղայի աղջիկը, Տիկին Շիշմանեան Ազգ. Հիւանդանոցին նուիրեր է 1000 լիրա հնչուն գրամ և 1200 լիրա արժէքով 2 տուն՝ Գատը գիւղի մէջ, ի նուիրատուին կամքին հա-

մաձայն դրամագլուխը անձեռն մխելի պիտի մնայ և տոկոսը պիտի գործածուի Հիւանդանոցի աւորեայ պէտքերուն:

Պօլսէն հասած ճամբորդներու պատճառին նայելով ժողովուրդի գրութիւնը շատ անտանելի է. նոյն իսկ կանոնաւոր անցադիրներով Պօլիս հասնողներ կը ձերբակալուին ու բանտի մէջ բազմաթիւ հայ բանտարկեալներու մասին հարցնող, փնտռող մըն ալ չկայ:

Ներքին գաւառներէն և գիւղաքաղաքէն հասնող ճամբորդ մը կը պատմէ թէ՛ ժողովուրդի վիճակը վերջին տարիճան անտանելի է. կառավարութիւնը ամենախիստ միջոցներով կը հաւաքէ յեանեալ տուրքերը. պաշտօնեայինքը նոյն իսկ գաղթողներու ու դէպքի ատեն սպաննուածներու տուրքերը կը պահանջեն:

Ահաւասիկ բարենորոգումներ թուրքը իր սպաննած մարդուն համար ալ տուրք կը պահանջէ:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Աւստրիոյ կառավարութիւնը անբանտու ժողէֆո պատուանշանին Ա. աստիճանը տուած է Պօլսոյ քաղաքապետ Ռետվան փաշային:

Երկրագործական և արհեստագործական ցուցահանդէսներ պիտի բացուին եղեր նաեւ այս տարի Տիգրանակերտի, Սերաստիոյ և Տրապիզոնի մէջ: Սերաստիոյ ցուցահանդէսը պիտի բացուի եղեր օգոստոս 19ին, իսկ Տրապիզոնինը հոկտեմբերին:

Անգրիանուպոլսոյ մէջ երկրագործութեան և առեւտրին զարգացումին համար կազմուած յանձնաժողովը ծրագիր մը խրկած է անտառներու և հանքերու նախարարութեան, որպէսզի երկրագործական նոր պաշտօնեաներ խրկուին հոն՝ ժողովուրդին սորվեցնելու համար երկրագործական գործիքներու գործածութիւնը:

Անաստուրի երկաթուղոյ ընկերութիւնը արմտիքի փոխադրութեան սակացոյցներէն կարեւոր զեղչեր ըրեր է:

Սուլթանին հազորդուած լուրերուն համաձայն ներքին կազմակերպութեան պետերը կը պատճան եղեր իրեն և Երւտըղին. Սուլթանը մեծ վախ մէջ է եղեր. նոյն իսկ կը վախնայ Սելանիք հասած եւրոպական զրահաւորներէն:

Սելանիքի մէջ պուլկար յեղափոխականները կնկան և ուրիշ անսակ հազուստներով ծպտուած կըլլան եղեր:

Հրամանատար Շէմսի Փաշան ալպանացիներէն գերի բռնուած է:

Իւսքիւպէն կը գրեն թէ շատ մը սերպեր միացեր են հըրոտախմբերուն:

Մերթ մօլլայի, մերթ սպայի և պարզ պիւնտրի հազուստներով յեղափոխականներ սկսած են երեւիլ Սելանիքի մէջ. մօլլա մը պօմպա մը նետեր է բոսթայի կաւքին վրայ, ու ինք անմիջապէս միւսեր շ. մօլլային վերադառնալով տակէն պուլկարական յեղափոխական թերթ մը գտեր են:

ՔԱՆՍՍԱ

Իրիտանական Գոլոմպոլոյ մօտ Ազաւաթ Բոյն կիրճին երկաթուղիի դէին մօտ Խըրթիլ լեռը բորբոքելով երկրաշարժէն ամբողջ շրջակայքը աւերած է. 83 հոգի մեռած են, որոնց 15ը կին 15ը մանուկ. ամենէն աւելի վնասուած է Ֆրանք քաղաքը որ երկու տարիէ իվեր շինուած էր:

Ա Ն Գ Լ Ի Ա

Երկրագործական նախարար Մր. Հէրպէրի մեռած է: Ծնած էր 1845 փետր. 24ին ազնուական հրն ընտանիքէ մը և մէկն էր արդի պահպանողականութեան տիպարներէն:

ԳԵՐՄԱՆԻԱ

Խուրքիոյ և Գերմանիոյ միջեւ առեւտրական յարաբերութիւնները աւելի ընդարձակելու համար Գերմանիոյ մէջ մեծ ընկերութիւն մը պիտի հիմնուի կըսուի: Այդ ընկերութիւնը գործակալներ պիտի հաստատէ փոքրիոյ բոլոր առեւտրական կեդրոններուն մէջ և գերմանական ապրանքներուն վաճառումը աւելի պիտի դիւրանայ ատով:

ՉԻՆԱՍՍԱՆ

Չինական իշխանութիւնները կանոնաւորապէս Վճարեր են 1900ին Չինաստանի Մոնկոլիոյ և Մանչուրիոյ մէջ կափամարտիկներու կողմէն կաթուղիկներուն կրած վնասները: Չինուներսերը կացութիւնը գոհացուցիչ է եղեր: Քուանդուկ և Քուանկսի մեծ նահանգներուն համար նոր կառավարիչներ անուանուած են:

Ճարոն Գօրէպէյն պահանջեր է որ Ռուսիոյ տրուած ին նման իրեն ալ իրաւունք տրուի Եալու գետին ափունջի անտառներուն մէջ ծառեր կտրելու համար:

ՆՈՐ ԹԵՐԹ

Խմբագրութիւնս ստացաւ «Ազատ Բեմ» անուն նոր թերթի մը երկրորդ թիւը. որ սկսեր է հրատարակուիլ Ազգ. քառագրիա՝ Պ. Երուանդ Օսեանի խմբագրութիւմը:

ՊԱՏԿԵՐՈՋԱՐԴ ԲԱՆԳԻՆ—ԵՐԳՈՐԱՆ

Հոյս տեսու Վազգէն—Երգարանը, բանաստեղծութիւններու, ազգային յեղափոխական, սիրային և ժողովրդական երգերու ճոխ հաւաքածուն, որուն անհամբեր կ'սպասէր ընթերցատէր հայ հասարակութիւնը:

600 մեծագիր երեսներէ բաղկացած, ընտիր թուղթի վրայ, հեղեցիկ պատկերներով զայդարուն, սոյն երգարանը մեծ պակաս մը կուգայ լրացնելու մեր ազգատիկ գրականութեան մէջ:

Գինն է, ճամբու ծախքով 1. 50
Գինը փափագողները դիմելու են Գ. Հօրանեան 379 Բ. Օ. Պօստ, Լիւն Մաս. (Ի. Ս. Ա.)

Ձեռքէ կը ծախուի նաեւ Հայրենիքի տպարանին մէջ

Հայրենիք Բուպ. Բօ.
61 հասկ Ս. Պօստով Մաս. (Ի. Ս. Ա.)
Արտասահմանի համար 5 ֆրանք
Պարսկաստանի համար 4 ֆրանք

Ծանօթ. — Սոյն երգարանը որպիսի որ քանի մը անգամ անհատական ջանքերով հրատարակ ելած է, սակայն ամբողջ հաստիքը յատկացուած է զուտ բարեսիրական գործի մը:
ՀՐԱՍՏԱՐԱԿԻՉՆԵՐ

ԾԻՐԱՆԻ ԱՐԵՒԵԼԻԸ

Գրեց անգլիացի Ուիլիամ Ուոթսընի բանաստեղծը և հայերէնի թարգմանեց Սոսրով. կը ծախուի յիսուն սանթիմի դիմել թարգմանիչին:

Մ. ՍՐՄԷՆ ԱՐՏՈՆԶ
43 Տուկլա Բօւս
Մեսքոն (Անկղղդի)
Եւ կամ Ռուրեկ Գու ապաւստեանի վառնա

ՕՏԳՈՐՈՒՄԿ

Мурадъ-Ераносянъ

Печатница «Взаимность» Варна